

## ԱՌ ՈԳԻՆ

Պահ մ՞այլ ժպտէ՛ ինձ՝ ով գըթած՝  
 Ո՛վ մշտակոյս . — յայտափ մրրիկ  
 Եռղ մ՞այլ կաթէ՛ թերես յետին  
 Ի' այնու թերես յաւէտ գողտրիկ .  
 Ժըպիտ մի ևս . — հատիկ հատիկ  
 Երկնիցըս մէջ մարած աստեղց  
 Թողած ունայնն՝ ուր գանդաշեմ՝  
 Լցուի ժպտով քո լուսայեղց .  
 Զանոյշ կամ խրոխտ երգս, որ հծծես  
 Ականջս ի վար՝ փորձեմ՝ ի զուր  
 Կրկնել . — փշրած քնարիս զերբուկք  
 Զայնս՝ ի հառաջ յեղուն տըխուր .  
 Մանիշակաց թարմ մարմանդէն  
 Այսպէս թոշի սիւզ հոտեան .  
 Բայց երբ կ'անցնի նոճեաց ՚ի շարս  
 Երգք իւր անհուն ողբոց դառնան .  
 Իտէալն է որ կ'անհետի  
 Եերազ աշխարհն՝ հրապուրիչ շող  
 Յաւիսութինց գեղեցկութեան,  
 Ծորչափ կըքի ճակատս ՚ի հող  
 Խոհալն՝ աստղը բնեռոյ  
 Յանհունութիւնս առաջնորդող,  
 Որ հոգեզմայլ գաղտնեաց տեսլիամբ  
 Կ'որրէ զմեր հոգս և օրտադող .  
 Ծաղկունք զոր ձեռըն քո ցանէ՝  
 Հալին զերգ ձեռան թերթք ՚ի վայրէջ .  
 Գորովով աշքդ յիս կը յառի,  
 Ի' արցունք մը կայ իմ՝ աշաց մէջ .  
 Ո'ր հուրեաց հոյլքն են վարդագոյն  
 Որ լողիկներն ՚ի ծուփ՝ թոշին  
 Մէկ արևէ ՚ի միւս՝ մազերն  
 Իրեն նըշոյլ սփռած ետին .  
 Ծաւի աշերն այն ոյց ակնարկ  
 Հըբշտակի երգ մ'էր հոգետած,  
 Միակ բարիքն յերկրի տայր ինձ՝  
 Մոռացութիւն և քիչ մ'երազ ...  
 Ո'ր այն զիշերք յոր դէմ առ դէմ

Ես՝ Խըցէս, դու՝ աստղիդ մէջէն  
 Խօսէինք, և ինձ լըսել տայիր  
 Ճնորիչ վանգիւնս աստեղց երգէն։  
 Ես՝ արբեցեալ անբաւութեամբ՝  
 Պահ մի յաղթող ժամսնակին՝  
 Ըզհոլաթեւա փորձել 'ի թռիչ  
 Կ'ըզգայ 'ի բահտ իւր զիմ հոգին։  
 Եւ այժմ աստուածն ինձմէկ կ'երթայ  
 Թողով յիս վիճ մը ցուրտ և ունայն։  
 Եւ կը գողամ հնչպէս որբիկն  
 Լըքեալ ճամբուն մէջ զիշերայն։  
 Երբ փարատին ամէն ցընորք՝  
 Ի՞նչ կը մընայ կեանքէն՝ աւաղ.  
 Մաղիկ մ'անբոյր և աներանդ  
 Կըծու հողմոց մատնեալ 'ի իւաղ։  
 Թռչնիկ թեէն վիրաւորուած  
 Որ բարախէ դեռ մարդին վրայ,  
 Տեսնէ զկապոյտ գլխուն վերե,  
 Թռչել ճգնի զուր, և ճըւայ։  
 Եւ սակայն այս ճակատազիրն  
 Է՝ ով անրիծ՝ ով երկնային։  
 Համբ՛յր մի ևս. — աշնան հուսկ վարդ  
 Զոր թղթատէ պիտի հիւսախն։  
 Ճակատազիրն է որ ձրձէ  
 Թերթ թերթ կենաց հնացեալ մատեանն,  
 Ինչպէս մանկիկ ծըւէն ծըւէն  
 Նետէ զթղթիկուրն ցիր և ցան։  
 Բայց տրտնջալ. — ինչո՞ւ.  
 Արե ըզջոս, գարուն ըզվարդս,  
 Մով զալիս իւր, մարդ՝ զանուրջս իւր  
 Կորանցընել պէտք են անդարձ։  
 Եւ ո՞գիտէ թէ իրականն,  
 Թէ նիւթ անխոնջ պեղեալ 'ի խոր,  
 Զըյանգիր ուր ուրեմն և այն  
 Ի նոյն աշխարհըս լուսաւոր։  
 Խոյս տան ծնդեալ ճակտէն 'ի բաց  
 Երազոց հոյլք ծիծաղասէր.  
 Ի՞նչ փոյթ. դեռ սիրտն ունի զիւր ինչ  
 Թէ արտասուաց չիթ մ'ունի զեռ։  
 Թէ թողուս իսկ՝ և մշտակոյս՝  
 Այս սիրտս՝ ան միշտ քեզմով է լի,

ինչպէս անօթն անոյշ խնկոց  
գահէ զմին բայր՝ մինչև փշրի...»

Թ. Թէ՛ԶեԱՆ

## ԳԱՐՈՒՆ

### ՎԵՐԱՄ-Մ-ԱՐՁ

Քոյր իմ, ահա զարդարուն  
Նորոգ եկաւ մեղ զարուն,  
Սրտիդ՝ հոգւոյդ պէս կուսան  
Ահա ծաղկունք այլ բուսան.  
Հասաւ առ մեղ զով զեփիւռ  
Խնկոց բուրմամբ քաղցրասփիւռ.  
Հասիր և գուն վարդերեն,  
Ուր ես, մհ քոյր իմ, ուր ես:

Դու խոստացար մեղ գարնան  
Դառնալ երբ հաւք կը գառնան.  
Դարձան թռչնիկք ի բունիկ,  
Մենք քեզմէ լուր մի չունինք.  
Ըզքեղ մօտիկ և հեռու  
Հարցինք ամէն հովերու,  
Ամէն զեփիւռք և հոսանք  
Ըսին. « Զեր քոյր չը տեսանք » :

Դարձեալ ըզքեղ անձկագին  
Հարցինք նորեկ սոխակին,  
Եւ խնդից երգն ի բերան  
Առ մեղ հասնող ծիծեսան,  
Բայց, « Զը տեսանք ձեր Պայծառ »,  
Կ'ըսեն սոխակն ու ծիծառ,  
« Երով անցանք, դաշտ ու բըլուր,  
Իրմէ բընաւ չունինք լուր » :

Հարցինք ծաղկանցն այն շըքեղ,  
« Ուր է ձեր քոյրն աչագեղ »,  
Այլ վահ, գոհարք դըրախտին